

ՍՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՒ ՅԱՒԱՏԱԼԻՔՆԵՐԸ ԳԻՒՂՈՒՄ *)

Իսկ եթէ մի կին առհասարակ երեխայ չի բերում կամ չափ ուշ ուշ է բերում, նա գնում է մի որևէ ուխտատեղի, գողանում է այնտեղից մի որևէ առարկայ. մոմկալ, մետաքսեայ թաշկինակ կայն մտքում ասելով. «Դու իմը տուր ես քոնը»: Երբ երեխայ է լինում գողացածի նման մէկն էլ առնում են և յետ տանում ուխտատեղին: Ժողովրդական երգի. «...Մուղնու շուշալէն գողացայ»... ակնարկ է այդպիսի գողութիւն:

Մանկական հասակին վերաբերում են նաև հետեւեալ հաւատալիքները:

1. Ծննդկան կնոջ գլխատակին դնում են դաշոյն, գանակ, երկաթէ շամիրուր կամ մի այլ պողպատեայ առարկայ. իսկ ծայրայեղ դէպքերում (երբ սրանք չեն օգնում), «Հմայել» կոչուած գիրքը, շար զօրութեան աղդեցութիւնից խուսափելու համար:

2. Եոյն նպատակով աշխատամէրը վերցնում է նորածին երեխային հանում է դուրս և դրան վրա դրսի կողմից շամիրուրով խաչաձև նշան է անում:

3. Զգուշանում են, որ ծննդից յետոյ անմիջապէս չքնի և առաջին օրը մենակ չմնայ: Հաւատում են որ եթէ քնի, ողինները նրա սերունդ կը գողանան: Զգուշութեան համար գլխի շորերի վրայ ասեղ են ամրացնում:

4. Որպէս զի ծննդկանը շուտ օքի կանգնի, առողջանայ, աշխատամէրը վերցնում է երեխայի բարուրը և գիմելով մօրը ասում է. «Ես եմ թևթև թէ դու» երեք անգամ. մայրը պատասխանում է. «Ես»:

5. Երեխան մկրտելուց մի երկու օր յետոյ «մեռնահան» են անում. այսինքն լողացնում են: Այն սապոնը որով երեխային մաքրում են «մեռնահան» անելիս, այն շորերը, որի մէջ դրուած է եղել երեխան մկրտութեան ժամանակ—մեռնի շորերը և նաքօտի թելը աշխատամէրը տանում է. սապոնը իբրև ապացոյց հանդերձեալ կեանքում իր մաքրուելուն, իսկ միւսները—որոնք և թաղնում են աշխատամօր հետ — իբրև նշան, թէ նա օրջան երեխայ է ընդունել:

6. Եկեղեցուց երեխային տուն բերելիս պատրաստ է լինում մի կործած մաղ, վերան երկու հաց խաչաձև դրած երեխային այնտեղ են դնում: Հաւատալիք կայ, որ այսպիսով երեխան բախտաւոր կը լինի: Գուցէ աղ ու հացով դիմաւորելու սովորութեան մնացորդ լինի:

*) Տես Արարատ № 4

7. Պատին ծնուած երեխան չի կարելի ուտիսին թողնել մկրտեալու և ընդ հակառակն՝ Միտքն այն է, որ մաքրուած գիմաւորն պատին կամ ուտիսին:

8. Ծննդկանին այցելութիւն գնալիս կանայք սեղան են տանում զանազան չոր կերակուրներով, ամանների թիւը պիտի զոյգ լինի, այն մաքրով որ ծննդկանն ու բերած երեխան կենդանի մնան — զոյգը չքանդուի, կէնդ աման բերելը շուղելու նշան է:

6. Եկեղեցուց մկրտութիւնից յետոյ երեխային տուն տանելիս կթէ առաջը շուն դայ՝ չորերը չատ շուտ կը գզի, լաւ չի պահիլ մեծանալիս:

10. Եթէ երեխայի բերանից ջուր է վազում քաւորի ճկոյթն են դնում բերանը, կամ կատուի պոչ, և կամ ջրազացի աւելով սրբում են:

11. Երեխայի պորտի այն մասը, որ վայր է ընկնում, նայելով թէ երեխայի մօտ կանայք ինչ են ուզում, որ երեխան դառնայ—նրա համապատասխան տեղումն էլ թաղում են. այսպէս, եթէ ուզում են ուսումնական դասնայ—ուսումնարանում, եթէ քահանայ—եկեղեցում, եթէ լաւ տաւար պահող—ուտացնում են տաւարին, եթէ արհեստաւոր—արհեստանոցում, եթէ պատահմամբ շունն է ուտում—դառնում է ման եկող մարդ և այլն . . :

12. Երեխային լողացնելիս վերջին ամանների ջուրը լցնելով նրա գլխին՝ ասում են. «էս քեզ քուն, հա քեզ դնջում (հանգըստութիւն), էս քեզ միս, էս քեզ առողջութիւն». ներկայ կողմներին թոյլ չեն տալիս սննեակից դուրս դալ մինչև երեխայի քունը տանի, հաւատալով, որ քունը «կը տանեն». տաշտի միջի ջուրը չի կարելի չարմել մինչև երեխայի քնելը—ապա թէ ոչ կը շարանայ երեխան:

13. Երբ մի երեխայ հանգիստ և երկար չի քնում, մի քրնկոտ մարդի բերում են և խնդրում որ լողացնելիս երեխայի գլխին ջուր ածի ու վերջումն էլ ձեռքերը լուանայ երեխայի գլխին: Հաւատում են, որ նրա թմրութիւնից այս ձևով երեխային էլ կանցնի:

14. Երբ առաջին անգամ երեխային դնում են օրօրոցը կամ չիբէք (փայտեայ անկիւնաձև խողովակ, որի իջով երեխան միգում է օրօրոցի տակ կզած ամանի մէջ) են դնում տակը մայրերը կրծում են մի փոքր օրօրոցից կամ չիբէքից և ասում են. «ես քեզ կրծեմ, գու իմ տղին մի կրծի»:

15. Երբ մայրը ստիպուած է մինակ թողնել քնած երեխային անյայտ շար զօրութիւնից ազատելու համար կամ մի կտոր հաց են դնում կրծքի վրա կամ չիշը (երկաթեայ մեծ շամփուր, որով խառնում են թոնրի կրակը) դէմ անում օրօրոցին:

16. Երեխան երբ սկսում է ձանաչել մօրը—ապա մազերը սկսում են թափուկը:

17. Երեխան երբ ուշադրութեամբ նայում է իւր մատներին, այսպէս են բացատրում, որ մատները մոմի նման լոյս են արձակում:

18. Եթէ երեխան միզում է իր տակի շորի վրա, և ուզում են առանց լուսնալու մէջը քամել՝ պէտք է անպատճառ թքեն թաց տեղի վրա յետոյ քամեն, ասա թէ ոչ երեխայի «միսը կը քամուի»-կը լղարի:

19. Երեխայի ձեռքերից բռնած կանգնացնում են և «աջ տոտ» անում ձեռները քաշելով օտիպում են քայլել, եթէ աջ ոտն է դրում մտադրած բանը կյաջողութի, եթէ ձախը—չի յաջողուի:

20. Եթէ երեխան պարկած տեղը բռնում է իւր ոտը և բարձրացնում է, ասում են, «ընկեր է ուզում» եթէ աջ ոտ է, միւս երեխան որ պէտք է մայրը բերի—տղայ կլինի, եթէ ձախը—աղջիկ:

21. Մինչև քառսուն որ հօր հնոտիներից չի կարելի երեխայի տակը դնել. «վալ» կոչուած վէրքերից խուսափելու համար: Վալը—մանր բշտիկներ են, որոնք ջուր են տալիս և վէրք են դառնում: Վալը երկու տեսակ է լինում. «արու», որ մի տեղից միւս տեղը չի փոխում, որտեղ սկսում է այնտեղ էլ վերջանում է, և «էգ» որ տարածւում է տեղից տեղ:

22. Երեխայի տակի շորերը չորացնելու փած ժամանակ դդուջանում են, որ շունը չը միզի նրանց վրա: Վէրքեր ևն առաջանում երեխի վրա:

23. Երբ երեխային մութ ժամանակ անց ևն կայնում դրան միջով, կամ առուի վրայից կամ ծառի տակով, կիսաձայն արտասանում են «Յիսուս, Բրիստոս», հաւատալով, որ այդպիսի տեղերում զխաւորապէս աղւղում է չար զօրութիւնը:

24. Երեխային ծիծ տալու ժամանակ եթէ մայրը ջուր խմի, երեխան «ծարաւ կանցնի», այսինքն կսկսի նիհարել, և աչքերը փոս կընկնեն. «Ծարաւ ևն անցնում» երեխաները նաև երբ ջուր խմել ուզում են բաց արտայայտել չեն կարողանում ու ծարաւ ևն մնում: Վերջին պատճառից հիւանդացածները ջուր չատ ևն խմում, չեն կշտանում ջրից: Այս հիւանդութիւնից խուսափելու համար, երբ երեխաները սկսում են ջուր գործ ածել, մայրերը փոքր ամանով ջուր են դնում չիւլքի տակը: Այս հիւանդութիւնից ազատելու համար իմացողները աճուկներից սեղմում են և մէջքի մի քանի մկանները բռնում և բաց են թողնում:

25. Եթէ ուզում են երեխայի անցանկալի տեղերում մազ չբուսնի, երեխայի համար առաջին Զօրօնէքին, Զատիկին կամ

Համարձմանը մայրերը փլաւը լցնում են այնտեղ և անմիջապէս բերանով ուտում:

26. Դատարկ օրօրօցը եթէ օրօրեն, երեխան կարող է վնասուել:

27. Եթէ երեխայի աչքերը չկապած օրօրեն աչքերը կը չաշանայ:

28. Երախան սկրտում է, կը նշանակի «բողաղ է լէնցնում»:

29. Երբ երեխայ ունեցող մայրը իր գլուխը լուանալուց յետոյ պէտք է կերակրի երեխային, անդատճառ պէտք է մի բան ուտի. եթէ ոչ կաթը կը ցամաքի:

30. Ծննդկանի կաթը շատացնելու համար հացը տանում են դաշտը եթէն առուի ջրով թրջում և տալիս են նրան ուտելու:

31. Նոյն նոստատակով Աստուածածնի անուան նուիրուած եկեղեցիների մէջ կղամ գերազմանի (Աստուածածնի), վրայ, տօնի օրը լցրած խաչած հատիկն են ուտում:

32. Եթէ երեխան յաճախ յօրանջում է, ենթադրում են, որ աչքով տուել են. չար աչքի ազդեցութիւնից ազատելու համար երեք անդամ խաչակնքում են երեխայի բերանի վրա և ասում «չար աչք չար փուշ»:

33. Մինչև տարին լրանալը երեխայի մազերը չեն խուզում, տարին լրացած օրը խուզում են, խնկի հետ կշռում, խուշկը տանում են եկեղեցի, իսկ մազը ամփոփում են բարձի մէջ. հաւատալով, որ եթէ գետին ընկնի երեխան գլխացաւ կընկնի: Մինչոյն հաւատալիքը կղել է առաջ նաև մեծերի մազերի վերաբերմամբ, քայց այս հաւատալիքը թուլացել է այժմ: Իսկ կանանց մազերը եթէ սկսում են թափել, սովորաբար թքում են վրան և այրում. հաւատալով որ էլ չի թափի:

34. Մինչև մի տարի երեխայի մազը սանրել չի կարելի առամները ցանցառ կը լինեն:

35. Մինչև մի տարի եթէ երեխայի օտի եղունկները կտրեն միտը կը թափի. եթէ ձեռքերինը կտրեն—երեխան զոյ կը լինի:

36. Եթէ երեխայի բերանը համբուրեն—նա մեծացած ժամանակ թէ փչի եռացող հեղուկի վրա, հեշտութեամբ կը հովացնի: Եթէ ձեռքերի մէջը համբուրեն—երեխան ուշագնաց կը լինի «կը թուլցնի», եթէ ձեռքերի երեսը համբուրեն—չուտ կը մեծանայ, եթէ ծոծրակը համբուրեն—խոտովկան կը լինի, եթէ օտերի տակը համբուրեն—ուշ ոտքով կը գնայ, յետոյքը համբուրեն—«նորից» կաննի (մի հիւանդութիւն է, սորա մասին յետոյ խօսք կը լինի):

37. Եթէ մի երեխայ մի բան ուզինայ ուտել և չտան, «ուժա» կը լինի, և կարող է դրանից հիւանդանալ: Նոյն իսկ երբ երեխան ձգտում է ցոյց տալիս զէպի ճրագը՝ մայրը ձեռքով պոկելու

նշան է անում և մօտեցնում է երեսայի բերնին, որ «ուսմա» չլինի:

38. Երբ երեսայի օտաջին ատամը երևում է «ատմասուրեկ» են անում, այսինքն ցորենը, սիսեռը, լոբին, կանեփը խաշում խառնում են իրար հետ, երեսային նստացնում են, նրա առաջը դրում են մկրատ, սանր, դանակ և հատիկը լցնում են գլխի վրա: Երեսան ձեռքը մեկնում է դէպի առաջ ցրուած առարկաները: Եթէ դէպի սանրն է մեկնում, դուշակում են թէ նրանից յետոյ մայրը աղջկի կը բերի. եթէ դէպի մկրատը—տղայ կը բերի և դերձակ կը դառնայ. եթէ դէպի դանակը՝ նոյնպէս տղայ կը բերի:

39. Երազիկների հօտը առաջին անգամ զգուշանում են երեսային տալուց, ասում են, որ դա հիւանդացնում է երեսային, մանաւանդ սուր հոտերը, ինչպէս փշատի ծագկինն է կամ մանուշակինը:

Մանկութեան վերաբերող հաւատալիքներին կարելի է կցել նաև այնպիսիները, որ վերաբերում են ծծի կաթին: Այսպէս երբ մի կին որ և է պատճառով կթում է իր ծծի կաթը, չպէտք է գետին թափի, այլ այնպիսի տեղ, որ չորորուի, ծիծը կը ցաւի: Երբ կինը պատահմամբ պարկում է ծծի վրա և զրանից ծծի մի մասը կոշտանում է և ցաւում, ասում են ծիծը «մաղ է խել»։ Այս հիւանդութիւնից ազատելու համար ծիծը կթում են իմացողները, կաթով մերսում ցաւող տեղը, մի և նոյն ժամանակ աղօթում են (միայն «Հայր մերն» է աղաւաղուած) և վերջում վախեցնում են ծիծը, այսինքն աղօթողը յարձակուող շան ձայն է հանում յանկարծ, մի և նոյն ժամանակ ձեռքը արագութեամբ մօտեցնում են ծծին ու հեռացնում և այսպէս երեք անգամ իրար վրա:

Մանկութեան վերաբերող հաւատալիքներին հետևում են պսակի վերաբերեալները, որոնք թէև չափ են, բայց յաջողուեց միայն մի մասը հաւաքել: Այսպէս:

1. Եթէ մէկը դժուարանում է իւր ամանը մաքրել՝ ասում են. «Սրբիւր նշանածդ սիրուն լինի»։ Իսկ եթէ մէկի հարսանիքին անձրև, կամ բուք է լինում ասում են. «Եվ դիտի քանի պղնձի տակ է լիղել»:

3. Երբ հարսին հանումեն հօր տանից, նրա մօրը թոյլ չեն տալիս, որ տեղից շարժուի. ապա թէ ոչ հարսը նստակեաց չի լինի:

3. Հարսին բերելիս թոյլ չեն տալ, որ հօր տան կօշիկները մնան ոտին, ապա թէ ոչ մարդը չուտ կը մեռնի: Գուցէ այս հաւատալիքի հետ կապ ունենայ կանանց սովորական անէծքը, որ մէկը միւսին անում է. «քեզի տեսնեմ մի ջուխտ մաշկով օխտը տուն մտնես»:

4. Հարսին բերելիս նրա հօր տանից բերում են խուփ, որ հարսի բերանը խուփ լինի, զգալ—որ հարսը հաւաքող լինի, հաց

—որ նրա կեանքը «մուսուլման»—առատ լինի, աման—որ ամուսնու գանից ներս մտնելիս կտարեն և ամեն չար խափանուի:

5. Ամուսնու տուն մտնելիս նորահարսի գլխին դնում են երեք ծալած հաց, որ նրա գալով առատութիւն լինի տանը:

6. Երբ Հարսանիքի մատուցում մտնում են, թագաւորի բարեկամներին մէկը «կապ» է անում, արնոտում և կոշտում է մի կոշտէք, կամ ծալում է մի գանակ, կամ կապում է մի մազից ուրբաժ թել և պահում է իւր մօտ այն մաքրով, որ նորափեսան մաքուր մնայ մինչև թագ վերցնելու օրը, երբ արած «կապը» քանդում են (խօսքը մերձաւորութեան մասին է): Թշնամի մարդիկ վնասելու մաքրով նոյնպիսի կապ անում են և հարկաւոր ժամանակին չեն քանդում: Սորա հետեանքն այն է լինում, որ նորապսակները կատուամեն և նրանց մէջ մերձաւորութիւն լինել չի կարող: Եթէ բարեկամների մօտից էլ մէկը արած «կապը» գողանայ և ժամանակին բայց չանի, դարձեալ կապուած կը մնան: Ուրիշ կերպով էլ են կապում: Եկեղեցում պսակի խորհուրդը կատարելու ժամանակ մէկը թշնամաբար մօտենում է և մի քար է գլորում հարսի ու փեսայի արանքը, և նրանք այն բռնելից կապում են: Գիւղացիք ամուսնութիւնից յետոյ անմիջապէս սկսող սեռական անկարողութիւնը նորա պսակների մէջ այս հանգամանքին են վերագրում, ասում են, որ մինչև արած «կապը» չբացուի, հնար չկայ ամուսինների կապը արձակելու: Եթէ մէկի թշնամութիւնն այնքան է, որ ուզում է յաւիտեանս տանջել պսակուողներին, կապած առարկան գցում է ջուրը, սորանով զրկում է նրանց ազատուելու հնարաւորութիւնից: Իսկ եթէ կապողը կապած առարկան թողում է մի տեղ կամ թաղցնում է, զբոսայները մեծամեծ դժուարութիւններով որոշում են առարկան և նրա տեղը և զբոսներով բաց են անում ու սրանով ազատում են կապուածներին:

7. Պսակի կարգը կատարելիս եկեղեցում սովորութիւն կայ հարսի և փեսայի բերանը մի մի կտորը քաղցր բան դնել, որ կեանքի մէջն էլ քաղցր լինեն:

8. Ինչպէս նորածին երեխաների և նրանց ծնողների քառասունքը ազդում է միմեանց վրա, նոյնպէս էլ ազդում է Նորապսակներից մի զոյգի քառասունքը միւս զոյգի վրա: Այսպէս քառասունքակիւ լինելու հետեանքն այն է լինում, որ 4—7 տարի երեխայ չեն ունենում պսակուողները: Դրա համար էլ եթէ երկու կամ երեք զոյգ պիտի պսակուին մի եկեղեցում, ամենայն զգուշութիւն գործ են դնում, որ կամ միասին մտնեն, կամ մէկի պսակը վերջանայ նոր միւսինը սկսուի: Պատահում է, որ հնարաւորութիւն չի լինում յետ ու առաջ գցելու այն ժամանակ բաժանում են թագաւորները ջոկ, թագուհիներն ջոկ և քաւորները ջոկ և այնպէս են մտնում եկեղեցի, այնպէս էլ դուրս գալիս: Եթէ մի պսակուող ուզում է մի ուրիշին «քառասունքակիւ» անել, դնում ծածկաբար միզում է նրանց հերթիկի վրա: Այս հիւանդութիւնից ազատուելու համար միջոցները նոյնն են ինչ որ առաջուց ասել ենք:

9. Մեծ պսակ երկուշաբթի օրը նորապսակ հարսները անպատճառ պէտք է գնան առուն ջուր բերելու, որ իրենց ցաւը ու չորը թափեն այնտեղ:

Մահուան վերաբերում են հետեւեալ հաւատալիքները.

1. Երբ քահանան գնում է հիւանդին հազորդելու, կարգ կատարելիս եթէ ձեռքի գաւազանը վայր ընկնի՝ հիւանդը չի ապրիլ:
2. Ննջեցեալի համար գերեզման փորելիս են եթէ բացուում է մի անյայտ տապան, այն ժամանակ նոր ննջեցեալին իջեցնելուց առաջ 5 կամ 10 կոպէկ փող են գցում գերեզմանի մէջ այն մտքով որ եթէ հանդերձեալ կեանքում տեղի մասին վէճ լինի երկուսի մէջ վերջինը իրաւունք ունենայ ասելու թէ ինքը տեղը ծախ է առել. հակառակ դէպքում նրա հոգին հանգիստ չի լինիլ:
3. Այն ջուրը, որով ննջեցեալին լողացնում են, պէտք է նախօրօք օրհնել նրան. լողացրած տեղը և ննջեցեալի մահացած տեղը երեք գիշեր մոմ են վառում և խուճկ ծխում:
4. Ննջեցեալին պատանելուց յետոյ նրա ականջները, աչքերի փոսերը և քթածակները մի մի կտոր խուճկ են դնում. բերանը և կրծքի վրա նշխարք:
5. Պատանի համար առած կտորը ծախել չի կարելի. պատանը ձեկուլց առաջ երեք անգամ գցում են սաների կողմից գլխի կողմը և հակառակը: Պատանի մնացորդը անպատճառ պիտք է կապեն սինի վրա:
6. Այն ասեղը, որով պատանը կարում են, կարելուց յետոյ կտորում են պատանի վրա. ինչ որ մնաւողին է վերաբերում տանը չեն թողնում. նոյն իսկ երբ գերեզմանները ցախ, լուցկի կամ խուճկ են տանում այլ եւ յետ չեն բերում:
7. Երբ քահանան ննջեցեալին առաջնորդում է տանից եկեղեցի կամ եկեղեցուց գերեզմանատուն, չպէտք է յետ նայի, ապա թէ ոչ մահը գիւղից չի հեռանալ:
8. Հաւատում են, որ երբ քահանան տեսնում է, որ գիւղից այլ եւ չեն մնանում, առնում է փիլոնը գնում է գերեզմանները փռում է այնտեղ և թաւալում է վրան:
9. Հաւատալիք կայ, որ հանդերձեալ կեանքում մեռածներին ջուր են տալիս միայն կիրակնակմախի. այն էլ փոսիկով, որ դոյանում է աջ ձեռքի բութ մատը ձգելիս նրա արմատի վրա: Այդ է պատճառը, որ նոր ննջեցեալների տէրերը կիրակնակմախի ջուր չեն խմում, եթէ ոչ ջուր բաժանողը նրանց ննջեցեալին հաւնելիս՝ կտաի. «քեզ ջուր չի հասնել, քո տէրը այնտեղ ջուր է խմել»:
10. Հաւատում են, որ հրեշտակը շան աչքին երևում է: Էրբ գիւղում ծանր հիւանդ կայ և երեկոյեան եկեղեցու դանդի հետ չները ոռնում են՝ ենթադրում են. որ հրեշտակ են տեսնում, և ուրեմն հիւանդը կը մնանի: Մանաւանդ լուսնկայ գիշերները երբ չները «լուսնահաջ» են տալիս, ծանր տպաւորութիւն է թողնում և սովորաբար աշխատում են թոյլ չտալ:

Սոցանով վերջանում է կեանքի երեք գլխաւոր մոմենտներին՝ ծննդեան, պաակին և մահուան ինձ յայտնի անտիպապաւութիւնների և հաւատալիքների շարքը: Մնացածների մասին, որոնք գլխաւորապէս բժշկական բնաւորութիւն ունին՝ յաջորդ անգամ:

(շարունակելի)

Սմբատ Բե. Սարգսեան.

1909 թ. 31 մարտի.

Շահրիար: